


ԶՈՐՐՈՐԻ ՏԱՐԻ

ԹԻԻ 174

21 ՆՈՅԵՄԲԵՐ 1914


ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ՏՕՆԱՑՈՅՑ



Նոյեմբեր	22	†	Կիր.	սձ.	Բ. Յիսնակաց:
	23		Բշ.	սկ.	Ս. Գրիգորի սփանչեղագործ հայրապետին եւ Միւռոնայ եպիսկոպոսին:
	24		Դշ.	քձ.	Ս. Կուսանացն Յուլիանեայ եւ Վասիլուհւոյ:
	25		Դշ.	քկ.	Պահոց:
	26		Եշ.	զձ.	Ս.Առաքելոցն Յակոբայ եւ Շմաւոնի:
	27		Ուր.	զկ.	Պահոց:
	28		Շք.	դձ.	Սրբոյն Կղեմայ հայրապետին եւ Բագարասայ Տոռոմենայ եպիսկոպոսին եւ Գրիգորի Ակրականդացւոյն:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՏՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԱԹԱԹԱԹԱԹԱԹ

Չորրորդ տարի 21 Նոյեմբեր 1914 Թիւ 174

«Մերական Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շա-
ռւնակէ Հայաստանի կաթողիկէ Ժողովոցոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
արել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերական Հայրն որսագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:
Նամակ կարգ. Մերի տէր Վաթի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թերզեան Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ.
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտմատարաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

ՊԵՏՐՈՍԻ ԱԹՈՒՆ ԸՍՏ ՊՕՍԻԻԷԻ

Հռոմի աթոռին վրայ տեսած և տարփողած են Եկեղեցւոյ սուրբ Հայրերը «առաքելական գահին գերիշխանութիւնը. գլխաւոր գերիշխանութիւնը. միութեան ակնադրիւրը. և Պետրոսին դիրքին մէջ՝ քահանայական աթոռին բարձրագոյն աստիճանը. մայր Եկեղեցին, որ միւս բոլոր Եկեղեցիներուն առաջնորդութեան ղեկը կ'ուղղէ. եպիսկոպոսութեան պետը, ուսկից կը մեկնի վարչութեան շառաւիղը. գլխաւոր ա-

թոռը, միակ աթոռը, որով միայն աւանդուն միութիւնը կը պահուի»: Այս ձեր լսած խօսքերն ըսողներն են Սուրբ Ոպտատիոս, սուրբ Օգոստինոս, սուրբ Կիպրիանոս, սուրբ Իրենէոս, սուրբ Պրոսպէր, սուրբ Ավիտիոս, սուրբ Թէոդորէոս, Քաղկեդոնի ժողովը և միւսները. Ափրիկէն. Գաղղիան, Յունաստանը, Ասիան, Արեւելքն ու Արեւմուտքը միասին միախորհուրդ. և ահաւասիկ առանց ստնանելու աստուածային արտաքոյ կարգի և առատազեղ լոյսերուն, և անոնց համեմատ կարողութեան, զոր առաջին ժամանակները ունէին առաքելները, բոլոր բրիտանեայ Եկեղեցիներուն առաջին հիմնադիրները, ահաւա-

սիկ, կ'ըսեմ, ինչ որ պէտք է մնայ, ըստ Յիսուսի Քրիստոսի խօսքին և մեր Հայրերուն հաստատուն աւանդութեան, Եկեղեցւոյ ընդհանուր յօրինուածութեան մէջ. և որովհետեւ Աստուծոյ տրամադրութիւնն էր թոյլ տալ, իր հաւատացեալները փորձելու համար, որ հերձուածներ և հերետիկոսութիւններ ելլեն, չկար բնաւ աւելի ամուր և աւելի ուժեղ կազմակերպութիւն մը որ կարենար դիմանալ և միանգամայն զանոնք ջախջախել: Այս կազմակերպութեամբ, եկեղեցւոյ մէջ ամէն բան հզօր է, որովհետեւ ամէն բան աստուածային է և մի է. և, որովհետեւ ամէն բան աստուածային է, կապն ալ աստուածային է. և մասերը այնպէս միացած են իրարու հետ որ իւրաքանչիւրը ամբողջին ուժովը կը գործէ...

Կը տեսնէ՞ք հիմայ յաւերժական գեղեցկութիւնը Կաթողիկէ Եկեղեցւոյ ուր կը հաւաքուին, կ'ամփոփուին ամէն տեղերու, ամէն ներկայ, անցեալ, ապագայ դարերու վայելչութիւններն ու փառքերը: Ինչ գեղեցիկ ես այս միութեան շնորհիւ, ո'վ Կաթողիկէ Եկեղեցի. բայց միանգամայն ինչ զօրաւոր ես: «Գեղեցիկ, կ'ըսէ Երգ-Երգոցը, և հաճելի իբրեւ Երուսաղէմ» և միանգամայն «ահաւոր իբրեւ ճակատած բանակ մը». գեղեցիկ իբրեւ Երուսաղէմ, ուր կը տեսնենք սուրբ միօրինակութիւն մը և հիանալի կարգապահութիւն մը միեւնոյն Պետին իշխանութեան տակ. գեղեցիկ անշուշտ խաղաղութեանդ գիրկը, երբ պարիսպներուդ մէջ ամփոփուած, կ'օրհնես քեզ ընտրողը, անոր ճշմարտութիւնները հաւատացեալներուն քարոզելով: Բայց եթէ գայթակղութիւններ գլուխ

վերցնեն, եթէ Աստուծոյ թշնամիները յանդգնին իրենց հայհոյութիւններով յարձակում գործել անոր դէմ, պարիսպներէդ դուրս կ'ելլես, ո'վ Երուսաղէմ, և իբրեւ բանակ կը ճակատիս անոնց դէմ կռուելու համար. այս վիճակին մէջ ալ միշտ գեղեցիկ ես, որովհետեւ գեղեցկութիւնդ քեզ չի թողուր բայց յանկարծ ահաւոր հանգամանք մը կ'առնուս: Որովհետեւ բանակ մը որ այնքան չքեղ կ'երևի զօրահանդէսի մը մէջ, ո'րքան ահաւոր կ'ըլլայ երբ իրեն դէմ լարուին բոլոր աղեղները և ցցուին բոլոր նիզակները: Ինչ ահեղ ես ուրեմն, ո'վ սուրբ Եկեղեցի, երբ կ'արշաւես, Պետրոսի առաջնորդութեամբ և միութեան աթոռին շուրջը համախմբուած, ջախջախելով ամբարտաւան գլուխները և ամէն բարձրութիւն որ Աստուծոյ գիտութեան դէմ կը ցցուի. քու հոժ վաշտերուդ ճնշումին տակ ընկճելով անոր թշնամիները. միահամուռ ճգմելով զանոնք անցեալ դարերու ամբողջ իշխանութեամբը և ապագայ դարերուն բովանդակ անէծքովը. ջնջելով հերետիկոսութիւնները և խղճելով զանոնք երբեմն նոյն իսկ ծնած ատեննին. բռնելով Բաբելոնի մանուկները և նորածին հերետիկոսութիւնները և քու քարիդ վրայ փշրելով զանոնք Յիսուսի Քրիստոսի քու պետիդ կողմէ վերէն ուղղուելով և միացուելով յարմար գործիքներով, պատշաճ միջոցներով, զինք ներկայացնող գլխով մը, որ ամէն բանի մէջ գործել տայ քեզի ամբողջովին, եւ քու բոլոր ուժերդ վարէ միակ շարժումով:

Այլ եւս չեմ զարմանար ոչ եկեղեցւոյ ուժին վրայ և ոչ ալ անոր միութեան հզօր հրապոյրին վրայ: Ինք տո-

գորուած է Հոգւով Անոր որ ըսաւ. «Ձա-
մէնքը ինծի պիտի քաշեմ» և ա-
մէնքը իրեն կու գան, հրեայ, հեթա-
նոս, խուժ և դուժ: Հրեաները ամենէն
առաջ գալու էին. և այս ապերախտ
ժողովուրդին երեսէ ձգուած ըլլալուն
հակառակ, կայ դարձեալ այն պատուա-
կան մնացորդը, կան այն երջանիկ ըն-
տրեալները զորոնք մարգարէները այն-
քան տարփողած են: Քարոզէ՛, Պետրոս,
ներսէ՛ ուռկանդ, աստուածայի՛ն ձկնորս:
Հինգ հազար, երեք հազար պիտի մըտ-
նեն նախ և ապա աւելի ստուար բազ-
մութիւն մը անոնց պիտի հետեւի
Բայց Յիսուս Քրիստոս ունի «ու-
րիշ ոչխարներ, որ այս փարախէն չեն»
ո՛վ Պետրոս, կ'ուզէ որ դուն սկսիս զա-
նոնք հաւաքել. նայէ՛ տե՛ս այդ օձերը,
տե՛ս այդ սողունները և այդ միւս ան-
մաքուր կենդանիները որ երկինքը քեզի
կը ներկայացնէ: Ասոնք հեթանոսներն
են, ժողովուրդ անմաքուր, ժողովուրդ
որ ժողովուրդ չէ. և ի՛նչ կ'ըսէ քեզի
երկնային ձայնը. «մութէ՛ և կե՛ր» միա-
ցուր, մարմնակցէ՛, մեռցուր հեթանո-
սութիւնը այս ժողովուրդներուն մէջ. և
ահա միեւնոյն ժամանակ Կուռնեկիոսի
պատգամաւորները դրան առջեւ կը
հասնին. և Պետրոս որ հրեաներուն եր-
ջանիկ մնացորդներն ընդունած էր, կ'եր-
թայ հեթանոսներուն երախայրիքը նուի-
րագործելու:

Երախայրիքէն վերջը պիտի դայ ամ-
բողջը. Հռոմի պաշտօնեայէն ետքը պիտի
գայ նոյն ինքն Հռոմ. Հռոմէն յետոյ
պիտի փութան ազգերը հետզհետէ:

Ո՛ր եկեղեցին ուրիշ այսքան եկե-
ղեցիներ ծնած է: Նախ անով եկած է
ամբողջ Արեւմուտքը, և մենք ամէնէն

առաջ, ինչպէս քիչ մը վերջը պիտի տես-
նէք: Բայց Հռոմ՝ ծերանալով ուժաս-
պառ չեղաւ, անոր ձայնը չմարեցաւ, դի-
չեր ցերեկ չի դադրիր ան աղաղակելէ
ամենէն հեռաւոր ժողովուրդներու, և
զանոնք կը կոչէ այն սեղանին՝ ուր ա-
մէն ինչ միացած է. և ահա այս մայ-
րական ձայնէն Արեւելքի ծայրերը կը
շարժին և կարծես կ'ուզեն նոր քրիս-
տոնէութիւն մը ծնանիլ՝ վերջին հերե-
տիկոսութիւններուն աւերները դարմա-
նելու համար: Այս է եկեղեցւոյ ճակա-
տագիրը. «Շարժեցից զաշտանախ քո,
աշտանակդ պիտի շարժեմ», կ'ըսէ Յի-
սուս Քրիստոս եփեսոսի եկեղեցւոյն.
պիտի առնում հաւատքդ. «զայն պիտի
շարժեմ». լոյսը չի մարեր, զայն կը տե-
ղափոխէ. լոյսը աւելի երջանիկ կլիմաներ
կ'անցնի: Վա՛յ, բիւր վա՛յ զայն կոր-
սնցնողին. բայց լոյսը իր ճամբան կը
շարունակէ և արեւը իր ընթացքը կը
կատարէ:

Թարգմանեց ԱՐՁԱՆ

ՀԻՆ ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Պ Ի Ր

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՒՅ ԴԷՄ

1829 Յ Յոնուարի մէջ

(Շար.)

29 Ուր.—Պատրիարքը էմնաֆներէն երկեր-
կու երեք երեք մարդ կանչեց պատրիար-
քարանը, սարաֆ եւ խուսուր էմնաֆէն, սկը-
սաւ ըսել. Տէրութիւնը հայոց ազգին մէջէն
չատ մարդ պիտոր աքսորէր, գրեթէ կրնամ
ըսել ազգին չորս բայէն երեքը պիտի երթար

և ամէն մարդ աղքատ հարուստ շատ ճամբու ծախքէ պիտի ըլլային . տէրութիւնը պախչեց աս բանս մեզի , բայց զիտնալու էք ես և ազգին մեծերը տս բանիս համար շատ նեղութիւն քաշեցինք մինչև որ այս հէյեթը բերելու :

Հիմա ես ալ ձեզի կ'ըսեմ ու կը ստիպեմ ան քի աս սէպէպովս ամէն մարդ ստակէ պիտի ելլար , հիմայ աս ստակը մեզի կու տաք , ամէն մարդուն հալին ինչ որ կը վայելէ նէ , և աս ստակը թօք կ'ըլլայ . ինչ բանի համար կ'ըսէք նէ , մեր ազգին աղքատը շատ է պէտք է որ մենք ազգերնուս աղքատները խտարէ ընենք որ սոխախ սոխախ պտտելով չի մուրան , ազգերնուս շահին չի վայելի :

Երկրորդ՝ ազգերնուս մէջը ճահիլ ճիւհիւններ շատ կան որ իրենց չի վայելու կերպ կերպ լաթեղէն կը հագնին և չի վայելու գործքեր կ'ընեն , աս ասունց սեպելով ազգը լիսանի կու դայ , պէտք է որ ասունք ալ նայովի . եւ ասունց պէս քանի մը տահա խօսքերով ժողովքը կը լմնցնէ :

Աս բանս Պէգճեանին թէրթիպովն էր . օր կ'ըլլայ քի զարբխանայի դուռը երսուն , քառսուն հոգի աղքատ կնիկ , էրիկ մարդ կը պէքլէյն . շատ բաներ ընել տուաւ չի դան տէյի . քանի ըրաւ նէ տահա էվէլօք շատցան : օր մը ժամկոցներ բերել տալով , բռնել տուաւ պատրիարքարանը խրկել տուաւ ծեծել տալով , շատ անգամ ինք կը ծեծէր , պազի քէրէ զապիթներուն ծեծել կու տար , տահա ասոր պէս շատ բաներ ըրաւ , գլուխ չի կրցաւ ելլել , անոր համար հիմա աս թէրթիպը բռնել տուաւ քի պէլքի ասով մէկ ճար մը կ'ըլլայ :

30 Շք.—Վէքիլ վարդապետը հինգ վեց ժամկոցով չարչին կ'երթայ սոխախ սոխախ կը պտտի և ճամբան պացողներէն՝ առէք սա , առէք սա ըսելով հինգ տասը հոգի ժամկոցները կը բռնեն պատրիարքարանը կը տանին , այլազգները սկսան ըսել ասոր անոր . տաճիկի ինթիսապ ազասի տեսեր էինք ամա , հայու ինթիսապ չէինք տեսեր . կ'ըսէին հայերուն . 'Մօ' ձեր խարապոյ ինթիսապը կու գայ կ'ը , փախէք չի բռնէ :

31 Կիր.— Պէգճեան Յարութիւնին հրամանօքը ամէն ժամ ծանուցում ըրին ըսելով . պատրիարքին տէրութենէն բաց ֆէրման եկաւ բաց լէնկ լաթեղէն չի հալցվի , էն թարիյի սարս խաբաղի չըլլայ , բարձր ես խալը կարծը քիւրք չի հալցվի , գոտի կիւլ չի կապվի , էնթարիյին եախան բաց չըլլայ , կոճկած ըլլայ , ամէն աւուր սամուրի միւլ թաւալիք քիւրք չի հալցվի , ասոր նման սահա ուրիշ պարապ բաներ շատ են . ևն . Ո՞վ կարող է հարցնելու թէ , ո՞ւր է տեսանք բաց ֆէրմանը ըսելու , ինչ որ կ'ուզեն կ'ըսեն և կ'ընեն , տէրութեան հրաման է , ըսելով :

1 Ապրիլ Բշ.— Կրկին վէքիլը ժամկոցներով կ'երթայ խումխաբույին դուռը թիւլ թիւլ ճիւլի մը խանութ կը նստի , ժամկոցներն ալ խաւասի պէս մէյմէկ տէյնէք ձեռով ընին սոխախի քէօլէները սպասել կու տայ . անցնող դարձողին , քսան երսուն հոգի բռնել կու տայ ժամկոցներուն . որուն աս ինչ իւրյաֆէթ է ըսելով , որուն եախադ կոճկած չէ ըսելով ևն . մէյ մէկ բանով կը խաւրէ պատրիարքարանը , յետոյ ամէն մէկին մարդուն կէօրէ տասնական կամ քսանական տէյնէկ զարնելով , որուն ալ թէքտիր կամ խրատ տալով թող կու տան . ասունց մէջը կրնամ ըսել քաթօլիք չի կայի պէս էր :

Աս բանս ընելովնին , միտք բանին աս էր . մէյ մը որ տէրութիւնը իմանայ թէ հայք իր ազգը թէրպիյէ կ'ընէ կոր և ազգերնուն վրայ միշտ արթուն են , մէյմըն ալ ըսվի և վախնան քաթօլիքները թէ հայոց ձեռքը ուժ միշտ կայ , ինչ որ ուզեն նէ կարող են ընելու , ժամ գացող քաթօլիքները սիւրկիւնը դադրեցաւ տէյի ժամէն չի փախչին , մէյմըն ալ որ կ'ուզեն կոր կէօյա իրենց մէջի գէշ սովորութիւնները ու պազի եօլսուզ բաներնին ազգովին չսկեն քի քաթօլիկն ալ ընդիմութիւն չընէ տէ միութիւն ընեն :

Աս բանս առաջ երթալու համար , մեծ ամիրաները իրենց մէջ ուխտ դաշինք ըրին , յետոյ ամէն ժամի ավտոակալները , քահանաները և եպիսկոպոսները կանչեցին ամէնքէն գումուս առին . մէյ մըն ալ ազգին մէջ ինք-

նազուլուի եպիսկոպոս, քահանայ և աշխարհական մարդիկ շատ կան, որ իրենց հավան կը չալեն, և ազգէն ալ չեն վախնար. մտածեցին որ ասոնք քանի մէջներնիս են նէ աս միութիւնը չըլլար, պէտք է որ ասոնք մէկ մէկ կերպով մէջներնէս դուրս հանենք, բայց չի կրցան ընել:

11 Ապրիլ Եջ.— Օրթաքեղի դպրատունէն հայոց աղքատաց դպրոցը խաբամա այսինքն լաթ հագնելու տուին. բայց աս դպրատունը ուղղափառաց տղաք ալ կը կարթան և ասոնց մէջն ալ աղքատ տղաք կար, ամէն տարի կու տային ուղղափառաց ալ, աս տարի չի տուին, և ըսին. ով որ ուղղափառ տղոցմէ խոստովանանք կ'ըլլայ մեղի նէ, անոր լաթ կու տանք չէ նէ ասանկ մէսէպսիզ մարդոց չենք տար, և ով եղաւ նէ տուին լաթ, չեղողին չի տուին:

13 Շք.— Զարպիսանէյէն հալածանքի սէպէպով ելող մշակներէն, մէկ քանին հայոց ժամը երթալով կրկին իրենց գործերնին մտան, հինգ վեցը ինչպէս անդին ըսի, ժամ չէին գացեր, սուճուլար քերխանէսին կը սպասէին, պօշ պօշուճա կ'երթային կու գային, բայց միտքը աս էր. ասոնք ալ աս կերպ բռնելով հէլպէթ ժամ կ'երթան ան տեհնը իրենց գործքին կը դնեմ, ասոնք ալ չի գացին, աս օրուան օրս որ էր Զատիկի Աւագ Շաբաթ, իրիկուան դէմ Պէզճեանը հարցնել տուաւ ասոնց. էղմը ժամանակէ կ'երթան կու գան կոր, ժամ գացին մի. ասոնք պատասխան տուին թէ չէ, չի գազինք, Պէզճեանը տաքնալով ու սրդողելով ըսաւ. ի՞նչ կայ քի չեն երթար կոր, գացողները ի՞նչ տեսան, չեն երթար կոր նէ ինչո՞ւ հոս կու գան կոր, ես ասանկ մարդիկ չեմ ուզեր, հերետիկոսի քով բան չունին ըսելով վախեց կրկին:

17 Դյ.— Վաքտուրուող մշակներէն երկու հոգի հայոց ժամը կ'երթան, էրթէսի օրը, եանի աս օրս կու գան ներս Պէզճեանին կ'ըսեն ժամ գացինք. Պէզճեանը ըսելուն պէս, տարէք ասոնք աւելի գործքերնուն մէջը դրէք, ինչպէս առաջ էին նէ, և չի գացողները թապիչէթովը դուրս մնացին ֆախիթները ի փառս Աստուծոյ համար:

Եւ աս օրերուն մէջ Պէզճեանը որ ան մշակները քի վախեց, միտվընին քաթօլիքները աքսորել էր, քի աս հարաքէթը ըրաւ. և էքէյի ալ սրան դրեր էին, սէրասքեր խուսրէֆ Մէհմէտ բաշան դեմ եկաւ աս բանին և Սարտէնիայի էլլին սերասքէրին՝ թէրճիմանը խաւրեց ըսելու. կէնէ հայք կ'աշխատին կոր քաթօլիքները աքսորելու համար, չըլլայ քի աս բանս ըլլայ. սէրասքեր բաշան ըսաւ թէրճիմանին. էլլի պէյին բարեւ ըրէ, չըլլար ասկից վերջը ասանկ բան:

21 Ապրիլ, Կիր.— Հայք այսօր մէկ հրեայ մը Պալաթի ժամը մկրտեցին, անունը Յարութիւն դրին, հիմայ կէչէր ստակն Յարութիւն է. Եւ ասկից եօթը ամիս առաջ չիկու հրեայ մկրտեցին հայք Օրթաքեղի ժամը Պատրիարքը սրբութիւն տուաւ ասոնց մէկուն անունը ինչատուր դրին և մեկալին Պօղոս, աս միտքով կէոյա Սողոս էր առաջ, հիմայ Պօղոս եղաւ:

Այսօր Պատրիարքը Օրթաքեղի ժամը եկաւ քարոզ տուաւ, բայց երկար չըլլալուն համառօտ գրեցի:

Թրէստայի վանքէն աս միջոցս աս եղած հալածանքին վրայօք ուղղափառաց համար պատմա եղած խրատական խօսքերով տեսուրակներ խաւրեցին, որպէս զի կարթացողին ուժ մը ըլլայ, չի գար նէ տահա շատ լաւ կ'ըլլար, զէրէ շատ խօսքեր ըլլալու պատճառ եղաւ, կրնար ըլլալ որ մեծ առիթ մը ըլլար թշնամիներուն:

Աս տեսուրակին մէկը հայոց ձեռքը անցնելով կարթացեր մեծով պզտիկով շատ նեղուցեր են. սա պատճառին համար եկաւ պատրիարքը քարոզ տուաւ տեսուրակին անունը տալով և ըսելով գացող քահանայից վրայօք աս մարդիկ ասկից գացին, բայց հեռուէն պիլէ ժողովուրդը կը քաքսեն կոր, ձեր քաշածին համար կը զրէ կոր քի մարտիրոսութիւն է. չէ, չէ, էշ իհասակութիւն է, մարտիրոսութիւն չէ. ի՞նչ է մեր ըրածը, ի՞նչ բան կայ մեր մէջը, ի՞նչ ծուռութիւն ունինք, էյեր կայ նէ ըսէք ինծի, ըսէք, այլ ան չէ, իլլա ձեր ըրածը նէ վստիքէթ է, շուտ անգամ ըսի, կրկին կ'ըսեմ, Աստուած ի վոր-

ձանաց ազատեսցէ, ևն. ևն. Սէրամին մէկ վախ մը տալ է աս ձեւովս, եանի կէնէ քէշ բան մը կայ ըսելով ամէն մարդ վախերնուն ժամ թափին. շատ անգամ ալ եղաւ ա', ժամ գացող քաթօղիքները նայեցան քի օրթալընը մայնայի պէս է, գացին խոստովանեցան մեղայ ըսին, ֆրէնկի կամ ուղղափառի քահանայի բաներնին լինցուցին, յետոյ կրկին վախ մը հայք տուին օրթալընին, կրկին ետ կէցողները հայու ժամը գացին, որը երկու անգամ, որը երեք անգամ, այսպէս ետգար պօզարի պէս և մէքիկի պէս գացին եկան:

23. Գշ.—Աս օր սահաթը տառնրկէսին շարժ եղաւ, զրեթէ երեք թաքիքէ քշեց, 12¹/₂ ին կրկին եղաւ քիչ, յետոյ իմացանք որ Բու-մէլիյի կողմը Տրամա և Չըհնա քաղաքները շատ մնաս տուեր է. ասկից ամիս մը առաջ ալ շարժ եղաւ, ութը օրէն վերջը իմացանք կէնէ Բումէլիի կողմերը Եէնի Շէհիրէն մինչեւ Էտիրնէ, խիստ շատ տեղեր կործաներ, կանաչ ջուր մը ելեր է տաք, յետոյ կամաց կամաց քաշվելով, ան եղած քաղաքները ազատեր է աս փորձանքէն:

Աս միջոցիս մէջ Պէգճեան Յարութիւնը հրաման առաւ թագաւորէն, Աղապաղչէսին ալ զարբխանա շինելու համար և սկսաւ շինել տալ, ամէնքը աս բանիս ալ շատ զարմացան:

6 Մայիս Բշ.—Հրեայներէն քանի մը հոգի հայ եղան և մկրտեցան և մէկ թարաֆէն ըլլալու վրայ են. հրեայք սալլաճութիւն ըրին քի ինչո՞ւ հայք զասոնք կը մկրտեն կօր, հայք մտածեցին աս բանս գոցվի աէյի, ասօր պատրիարքարանը խորհուրդ ըրին, ասը յանցանքի տէրերու անունը չի տալով քանի մը հոգի բէսի բայէ մարդիկներէն աքսորեցին Լիմաշի վանքը, ըսելով քի պատրիարքը ևւ ազգին միծերը չի գիտնալով քանի մը չափքըն աս բանս ըրեր են:

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՀԱՅԵԿԻՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՍԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ" ԳՐԱԶՆ

ԴԻՐԷ Ա.—Ի. Ե. Կ. —Դասասանի եւ մեղաց պատիժ-
ներուն վրայ:

(Շար.)

Այն կրակը ուրիշ ի՞նչ քան պիտի ծախէ սպառե, երբ ոչ իւր մեղսերդ:

Որչափ աւելի դուռն փակ կը խնայես իմաս ու մարմնոյ կը հեծախ, այնչափ աւելի մեծ պատիժ պիտի փաշես վերջը եւ աւելի մեծ նիւթ կը պատրաստես այրե-լու:

Ինչ քաներու մէջ որ մարդ մեղանկեց, ա՛նոնց միջ աւելի ծանրապես պիտի պատժուի:

Հոն ծոյրերը հրաշիկ խրաններով պիտի մղուին, եւ որհրամոյները անհամեմել ծաւաւով ու անօրոքեամբ պիտի պատժուին:

Հոն անպարկեշտներն ու ցանկաստեղները եռացած ձիւրոյ ու զարշափոս ծծումքի մէջ պիտի քարթաւին. եւ կասաղի շուներու պէս ահագին ցաւով պիտի ոռ-հան նախանձոսները:

ՍՈՒՐԲ ԲԵՌՆԱՐԴՈՍ. ՎԱՐԴԱՊԵՏ ԵԿԵՂԵՅԻՈՑ

Սուրբ Բեռնարդոս երբ վանքը դարձաւ բնաւ նկատի չառաւ թէ տակաւին բոլորովին ապաքինած չէ: Փոխանակ իր մարմնոյն խնայելու, սկսաւ ճշդիլ գայն ծոմերով, հսկումներով և նորանոր մտահոգու-ցումներով: Ոտքի վրայ կ'աղօթէր գիշեր ցերեկ. և ա՛յն տառն միայն դադարեցաւ այսպէս ընելէ երբ ծոմաբեկ ծուռիկը և աշխատանքէ ուռած ոտքերը չկրցան լայնել. զինքը վեր բռնել. Բուրձ հագաւ որ-չափ տառն որ կրցու զայն պահել. Բայց ուրիշները որ իմացան անմիջապէս ձգեց զայն, որպէս զի չըլլայ թէ իր եղբայրները հեռաւին այս խոտութեան որ իրենց տառաջութեան կրնար փասել. Իր անունդ հաց և ջուր էր, կամ խաշուած խոտի մը հիւթը. և չէր կրնար կամ չէր ուզեր բնաւ ուրիշ բան բերանը դնել. Շատ քիչ անգամ քիչ մը գինի կը դորժածէր, ա՛ն ալ ջուրը իրեն աւելի արտօթելի ըլլալուն համար, ինչպէս ինքը կ'ըսէր: Շատ դժուարութեամբ ետ կը կենար վանական կամ գաշտոյնի արտաքին աշխա-տանքներէ, թէեւ հագիւ տեղէն կրնար շարժիլ. Վեր-ջապէս այնքան բուռն խոտութիւն բանեցուց իր անձին նկատմամբ, որ ստամոքսը բոլորովին տկարա-ցաւ, և ինչ որ կ'ուտէր դուրս կու տար: Ինքն իսկ կը խոստովանէր, ծերութեան ժամանակ թէ ծայրայե-ղութիւն գործածէր, որովհետեւ պէտք է ինքզինքը մահացնել, բայց ոչ թէ փճացնել կամ ի սպառ չգա:

ցնել այն պիտի որ Աստուած մեզի տուած է իրեն ծառայութեան համար:

Սակայն այս սուրբ խտուածաբան Աստուած զանիկայ պատրաստեց և ըրաւ արժանաւոր դործիք մը անթիւ հրաշքներու զոր կ'ուզէր կատարել աշխարհիս մէջ. և այս քանիս համար, տուաւ անոր պէտք եղած տուողութիւնը երբոր հաճեցաւ: Եւ հակառակ անոր յետին աստիճանի տկարութեան, անոր պարգեւեց ուժ և զօրութիւն թագաւորներու և ժողովրդեան առջեւ իր խօսքը քարոզելու, հարիւր վաթսուէն վաթս հիմնելու, քրիստոնէութեան մեծամեծ վեճերուն դատաւոր հանդիսանալու, հերձուածները ջրջելու, հերետիկոսութիւնները ամօթապարտ ընելու: Թագաւորութիւնները խաղաղելու, վեհապետներու միջեւ պատերազմները խափանելու, և երկրիս վրայ չարագործներու սարսափը և արդարութեան ու ճշմարտութեան հզօր պաշտպանն ըլլալու:

Կրօնաւոր մը, Ռոպէր անունով, որ Սուրբին ազգական էր, խոյս տուաւ իր վանքէն և գնաց Գլիւնիի վանքը, որուն կրօնաւորները զինքը համոզած և սիրաբ շահած էին: Բեռնարդոս այս կրօնաւորը ետ դարձնելու համար ուղղեց անոր սքանչելի նամակ մը: Այս նամակին մէջ սուրբ համարձակութեամբ մը կը խօսի այն անկարգութեանց վրայ որ Գլիւնիի կտրգին մէջ մտած էր սուրբ Մայեօի մահէն վերջը: Այս նամակը գրի առնողը, Կիլիսիոյ, որ յետոյ Ռիէփայի արքայ եղաւ, կը հաւատարմութեւ Սուրբը վայն թեւաբարձ պահուէն յանկարծ յորդ անձրեւ մը տեղալ սկսաւ. որովհետեւ իրենք բաց դաշտի մէջ էին: Թուղթը ամբողջ պիտի թրջէր, բայց վրան չիթ մը անձրեւ իսկ չինկաւ. և այս հրաշքով Աստուած ուղեց ցոյց տալ թէ իր հոգեով և միմիայն իր փառքին համար կը գրուէր նոյն նամակը:

Սուրբը ծանրապէս հիւանդացաւ երբ իր իմաստութեան համբաւը Ծրանայի ամէն կողմը կը տարածուէր: Այն պահուն ուր ամէնքը կը սպասէին իր վերջին շունչը տալուն, յանկարծ յափշտակուեցաւ մաքով. իրեն այնպէս երեւցաւ թէ գինքը կը ներկաւ յացնէին Աստուծոյ տետեանին առջեւ և սասանան, մարդոց անագորոյն թշնամին, իրեն դէմ շտա մը ամբաստանութիւններ կ'ընէր: Բեռնարդոս կը պատահաւոր Յիսուսի Քրիստոսի արգիւնքներուն ապաւինելով, վերջը քնք իրեն եկաւ և հրաշալիօրէն բժշկուեցաւ: Հպումով նուիրական ձեռքերուն Կուսմոր, Սուրբ Լուարնտիոսի և Սուրբ Բենեդիկտոսի որ երկնաժպիտ դէմքով երեւցան իրեն:

ՊԻՈՍԺ. (*)

(Շար.)

Արհի. Երնէլի որ 1860էն ի վեր Թրէվիզոյի Եպիսկոպոսն էր, լաւ ճանչցաւ թէ Սարգօ քահանայն կոչուած էր բարձրագոյն վախճաններու և պաշտօններու. հետեւաբար որոշեց՝ Աստուծոյ լուսաւորեալ և առաքինապարզ այս եկեղեցականը իրեն մօտը բերել: Ուստի 1875ին հրաւիրեց զանի իր քովը և անուանեց Թրէվիզոյի Կանոնիկոս:

Ինչպէս Թոմազայի, նոյնպէս նաեւ Սալցանոյի սիրելի և քաղցր յիշատակը իր սրբոսին մէջ միշտ դրոշմուած պահեց Սարգօ՝ թէ՛ իբր Կանոնիկոս ու եպիսկոպոս, թէ՛ իբր կարգինալ ու պատրիարք: Սալցանոյի ժողովուրդն ալ յաւէտ երախտապարտ մնաց իրեն, և իր երախտապարտութեան իբր նշան, այս օգոստոսիաւ անձին՝ որ հոն ժողովրդապետի պաշտօնը վարած էր ա'յնքան խըղճմտօրէն, յիշատակն յաւերժացնելու համար, իրենց եկեղեցւոյն աւանդատանը մէջ գեղեցիկ վերադրութեամբ իրեն վեհափառ պատկերը արձանացուցին, և Վենետիկոյ Պատրիարք եղած օրն ալ արուեստական ոսկեգրուաք Միգարան մը ընծայեցին. իսկ 1904ին, երբ Ծայրագոյն Քահանայապետութեան Աթոռին վրայ գերագահ կը բազմէր իրենց նախկին սիրելի ժողովրդապետը՝ իբր Փոխխանորդ Քրիստոսի, եկեղեցւոյն մէջ՝ ամպիրոնին գիմնացը, Պիոս Ժ.ի մարմարեայ կիսարձանը կը դրուէր յատուկ պատուանդանի մը վրայ, գեղեցիկ գործ երեւելի սնդրիան տապործ Ճուզիի, ի Վենետիկ:

Ուստի 1876ի գարնան մէջ էր որ Սարգօ Կանոնիկոս անուանուեցաւ ի Թրէվիզո: Այն բարի Եպիսկոպոսը, որ անոր վրայ կը տեսնէր Աստուծոյ շնորհքները և կ'ուրախանար, կարպեց զանի նաեւ իր Կղերանոցին խոստովանաւոր և ուսուցիչ: Խրատաբանութիւններն ինքը կ'ըսէր ու մտածականները կանոնաւորապէս ինքը ընել կու տար. որչափ որոնք եկեղեցականութեան համբուն մէջ այսպիսի առաքելի ու եռանդնալից աւաջ-

նորդ մը ունենալուն վրայ խիստ գոհ և ուրախ էին . իր խօսքը պարզ էր մանաւանդ և իմանալի , լաւ կարգաւորուած և բացարձակապէս գործադրելի . կը խօսէր մեծ դիւրութեամբ , կենդանի և համոզկեր եղանակաւ : Բայ աստի , Սարգօ Կանոնիկոսը՝ իրեն խնամոց յանձնուած կղերականներուն վրայ արտաքոյ կարգի հոգածու էր . կ'առաջնորդէր անոնց , խորհուրդ կու տար , կը քաջալերէր , կը մխիթարէր , և՛ ի հարկին , անոնց կ'օգնէր , և յամենայնի կը շահապրգուէր անոնց բարւոյն համար :

Սակայն իր ամենամեծ գործունէութիւնը աւելի ընդարձակ դաշտի մը մէջ երեւան կու գար . Սարգօ Կանոնիկոսը միանգամայն զիւրաւարակ էր եպիսկոպոսարանին մէջ , ուր բարի Եպիսկոպոսը տարիներու բեռան տակ ընկճուած , այլ եւս բացարձակապէս տէրը չէր իր մասաւորական կարողութիւններուն , նոյն վիճակին մէջ էր սաեւ Ընդհանրական Փոխանորդը . և միակ օգնականը զոր ունէր Սարգօ , գրեթէ միշտ հիւանդ էր : Այսպէսով ահա ծանոթիւն աւուրն եւ օր մը բողջ ապագայ Պիոս Ժ . ի ուսերուն վրայ էր :

Արհի . Մինչև ի վախճանեցաւ 1879ին , և Գեր . Յովսէփ Սարգօ Տեղապահ ընտրուեցաւ և այս պաշտօնը վարեց 27 Նոյեմբերէն մինչեւ Յունիս 1880 , ամենայն գործունէութեամբ ու եռանդեամբ : Իսկ երբ նոր Եպիսկոպոս անուանուեցաւ Գեր . Աթօլնիօ , այն ատեն Սարգօ Կանոնիկոսը իր զբաղումներէն փոքր ինչ թեթեւցած ըլլալով , սկսաւ աւելի եռանդեամբ քարոզելու . այս պաշտօնին համար նախասիրութիւն մը ունէր ինքը :

Սակայն կը մօտենար Կանոնիկոսութեան ալ իններորդ տարին լմնալու , ինչպէս պարզ քահանայութեան և ժողովրդապետութեան պաշտօններն ալ իննական տարի տեւած էին : Այս իննամիայէն վերջը պիտի սկսէր մեծ հովուի , այն է՝ եպիսկոպոսական իննամիայն :

Մանդովայի Եպիսկոպոսն Արհի . Պէրէնկօ փոխադրուած էր Ուտինէի Արքեպիսկոպոսական աթոռին վրայ , եւ՝ 10 Նոյեմբեր 1884 , Սրբազան Բահանայապետն Նըջանկայիշատակ

Լեւոն ԺԳ . , գաղտնի Կարդինալաթողովին մէջ Մանդովայի Եպիսկոպոս կարգեց ու հոչակեց՝ Թրէվիզոյի Եպիսկոպոսարանին Ատենապիր Գեր . Յովսէփ Սարգօ Կանոնիկոսը : Եպիսկոպոսական ձեռնադրութիւնը տեղի ունեցաւ ի Հոռոմ , նոյն ամսոյն 16ին , Բահանայապետին Ընդհանրական Փոխանորդ Վսեմ . Կարդինալ Բարոքքիի ձեռօք , առնութեակացութեամբ իր դեռ կենդանի նախորդներուն՝ Արհի . Պէրէնկոյի և Բօդայի :

Հետեւեալ տարուան Մարտի 18ին , Արհի . Սարգօ Եպիսկոպոսը , որ դեռ Վենետիկ կը գտնուէր , Մանդովայի իր սիրելի ժողովրդեան կ'ուղղէր իր առջինեկ կոնդակը , իր օծութեամբ և հայրագութ սիրով իր ժողովուրդին , զոր Աստուած իր հովուական խնամոց յանձնել հաճած էր . այն օրը՝ քաղքին պաշտպան Ս . Անսիլմոսի տօնն էր . ահադին բաղմութիւն մը լեցուած էր Մայր Եկեղեցին . անկարագրելի եղաւ խանդավառութիւնը :

Այն տարուան Աւագ շաբթուան վերջին օրերն ու զառկական հանդէսները Արհի . Սարգօ անցուց իր մայրիկին ու քոյրերուն քովը , ի Րիէզէ : Զատիկն օրը ամբողջ իր ծննդավայրը մեծ ատնախմբութեան մէջ էր , և ուղեց ընծայ մը մատուցանել մեծափառ քաղաքացիին :

Իր մայրիկը , համեստ ու աշխատասէր , չուղեց բաժնուիլ իր աղքատիկ բայց սիրելի տունէն՝ ընկերանալու համար իր Եպիսկոպոս որդւոյն : Նուիրեց անոր իր մայրական արցունքները , բաժանման օրը :

Արհի . Սարգօ իր հանգիստուր մուտքը կ'ընէր ի Մանդովա՝ Ապրիլ ամսոյ 18ին : Ամբողջ քաղաքը և դաւառն իսկ՝ զդրգած էր : Շատ հեռունիքը եկած էին զինքը դիմաւորելու համար՝ Մերակուտականներ , Ներսիսիաններ , մեծամեծներ , աւագ և բարձրաստիճան եկեղեցականներ : Կառքերու անհատնում շարքը մեծահանդէս ուղղուեցաւ դէպ ի Մայր Եկեղեցին , մինչ զանգակները հրճուալից քանդիւններ կ'արձակէին և խրուում բաղմութիւնը ցնծադին կը ծափահարէր : «Մեր բարի Եպիսկոպոսը կ'ուղենք

տեսնել» կ'աղաղակէր անթիւ ժողովուրդը մեծ հրապարակին վրայ. և ինքը՝ անուշա-
յող պատշգամբին վրայ ներկայանալով, սի-
րալիր եղանակաւ շնորհակալ եղաւ, և յու-
զուած ու սրտեռանդն օրհնեց իր սիրասուն
զաւակները:

Հետեւեալ օրը հանդիսաւոր մուտքը գոր-
ծեց Մայր Եկեղեցւոյն մէջ և հոն խօսեցաւ
իր առաջին քարոզը:

«Եթէ Մանդովայի քեւը իր նոր հովիւը չի
սիրեր, յայտարարած էր Լեւոն ԺԳ. երբ
կ'անուանէր Արհի. Սարգոն, նշան է քե չի
կրնար մէկը սիրել. որովհետեւ Սարգո անեկեմ
առժամաւորն ու անեկեմ սիրելին է Եպիսկո-
պոսաց մեջ:» Եւ յիշաւ Սարգո զինքը ներ-
կայացուց Գաղաքապետին Մանդովայի՝ իրր
«պաշտօնեայ ա'յն կրօնքին՝ որուն զրօշն է
խաղաղութեան զրօշը, որուն օրէնքն է սի-
րոյ օրէնքը»: և կը վստահացնէր զայն «որ
նոր Եպիսկոպոսը, աղքատ ամէն բանի մէջ՝
բայց հարուստ սրտով, ուրիշ նպատակ չունի
բնաւ եթէ ոչ աշխատիլ հողոց փրկութեան
համար, և կազմել ամենէն՝ մէկ ընտանիք
բարեկամներու ու եղբայրներու»:

(Շարունակելի)

ՖԱՐՄԱՍՕՆՈՒԹԻՒՆԸ

Գ Լ Ո Ւ Ն Բ .

(Շար.)

Յօդուած Բ.— Եկեղեցիին հետ ըլլալ եւ անկէ
ջրածնուիլ:

25. Ընդհանրապէս ամէն մարդ համո-
զուած ըլլալու է թէ՛ անհրաժեշտ պէտք
մ'է հաւատարմութիւն ու քրիստոնէաբար գործելն,
և մտքով, սրտով ու կամքով կատարելապէս
Եկեղեցւոյ հետ միացած ըլլալը: Մեր հա-
ւատքը կու գայ Աստուծոյ՝ որ իսկապէս
յաւիտենական ճշմարտութիւնն է. ուստի
այդ հաւատքը ուրիշ բան չի բովանդակեր
բայց եթէ ճշմարտութիւն. եթէ անոր մէջ

գտնուի խորհրդաւոր կամ մթին (զփուարի-
մաց) բան մը, այս չի նշանակեր երբեք թէ
նուազ ստոյգ կամ անտեղի բան կը պարու-
նակէ իր մէջ: Մեր կրօնքը աշխարհի վրայ
ուրիշ բան չըրաւ բայց եթէ միշտ բարեք. և
ամենեւին ամենալու պատճառ մը չունինք,
այլ ընդհակառակն սլարծենալու շատ մը ա-
ռիթներ և փաստեր: Յիշենք մեր Աստուա-
ծային Փրկչին խօսքը. «Ով որ գիտ կը խոս-
տովանի մարդոց առջեւ, ես ալ զայն պիտի
ախտաւորեմ իմ Հօրս առջեւ որ երկինքն
է. և ով որ ամօթ կը սեպէ գիտ և իմ
«խօսքերս զաւանիլ մարդոց առջեւ, Որդին
«մարդոյ ալ զայն ամօթ պիտի համարի իր
«և Հօր ու Ս. հրեշտակաց փառքով եկած
«ատեն»¹ Արդ՝ քրիստոնեայ ենք և միշտ
քրիստոնեայ մնանք ու քրիստոնէաբար ապ-
րինք ամէն գնով, ամէն բանէ առաջ և ա-
մէն տեղ:

26. Բաջ գիտենք թէ Աստուած Եկեղեց-
ւոյ հետ է և միշտ զայն կը հողայ, որպէս
զի, սորվեցնելու մէջ անսխալ և գործելու
մէջ սուրբ ըլլալ Բրիտոսի անարատ Հարսը.
ուրեմն չէ թէ միայն մտքի, այլ նաեւ սրտի
և հոգւոյ լիութի յարգանքով, զգացմամբ և
վերաբերմամբ՝ զգալ, խօսիլ և գործել պար-
տաւոր ենք անոր հետ ամէն բանի մէջ, և
կատարեալ վստահութեամբ թողլու ենք որ
ան զմեզ կառավարէ: Ս. Եկեղեցւոյ և Կա-
թողիկէ կրօնից ու անոր դատին վերաբեր-
եալ բաներու մասին, Ս. Եկեղեցիէն աւելի
գիտուն կարծուելու մարմանքն, Սրբազան
Բանաձայնապետէն և անոր հնազանդող հ-
պիսկոպոսներէն աւելի Աստուծոյ լուսաւոր-
ուած և ուսած ճանչցուելու տեսչէն աւելի
յանդուգն և անհանդուրժելի յաւակնութիւն
և տգիտութիւն չի կրնար ըլլալ երբեք:

27. Ս. Եկեղեցւոյ հաւանելէ և անոր
հնազանդելու պարտաւորութիւնը ճանչնալէ
վերջ՝ ընդունելու և գործադրելու ենք նաեւ
ծէսերն և անոնց կատարման համար յատ-
կացուած և որոշուած գործքերն ու արա-
րողութիւնները, ինչպէս են Ս. Ամուսնու-

¹ Մատթ. Ժ. 32: Ղուկ. Թ. 26:

թեան, թաղման և միւս խորհրդոց և այլն . և մերժելու ենք անոնց հակառակ ո՛ր և է գործք՝ զորս Ս . Եկեղեցին կ'արգիլէ ու կը մերժէ . ուստի, զիսկիդուք զոր Եկեղեցին կ'արգիլէ իբրեւ հեթանոսական սովորութիւն, որ մեր նախահարց քրիստոնէական իմաստէն և սովորոյթէն օտար և տարօրինակ բան մ'է : Միմիայն Ս . Ամուսնութեան մասին Ս . Եկեղեցիէն սահմանուած և պարտադրուած պարտաւորութիւններն ու գործողութիւնները կատարելէ յետոյ, հաւատացեալք պարտին ըստ օրինաց քաղաքական գործառնութիւններն ալ կատարելու, որպէս զի, կարենան քաղաքական օրինաց և կառավարութեան առջեւ սպանովել իրենց և զաւակաց իրաւունքները և օրինական պաշտպանութիւնը :

Յօդուած Գ. — Կարողիկէ սպագրութիւնը :

28. Պարմասոնները ամէն բանէ աւելի կը ջանան կասկածելի ցուցնել կաթողիկէ տպագրութիւնը . անոնք խոր քնոյ թմբիրին մէջ կ'ուզեն թողուլ բարեմիտ կաթողիկէները և այս կերպով անզգալապէս այլայլել և խախտել անոնց հաւատքը կամ գոնէ արգիւնել միջոցները մասնաւորապէս հռ. պարականները և սնուցանել սոյնօրինակ հոգեկործան գաղափարներն ընտանեաց և մարդկային ընկերութեան մէջ . Ուստի հաղարումէկ հնարքներ ու միջոցներ ի գործ կը դնեն, որպէս զի լոեցնեն ձեռնհաս անձերն և արգիւնեն անոնց ազգեցութիւնը, որոնք կըրնան նշմարել ու արգիւնել իրենց նենգամիտ և խաբեպաար քողարկեալ գործողութիւնները, ձեռնարկները, և այսպէսով առաջին առնուլ իրենց մտադրած և սպանացած վերահաս կամ մօտալուստ վտանգներուն և չարիքներուն : Կաթողիկէ կղերէն վերջ՝ կարող կու գայ կաթողիկէ տպագրութեան . կղերը պաշտօնական իշխանութիւնն ունի առաքելաբար սորվեցնելու, կրթելու և զգուշացնելու հաւատացեալները . տպագրութիւնն ալ զլիաւոր օժանդակ մասը կը կազմէ, որ մեր դարուն մարդկային օժանդակութեանց քմենապաղու և յարմարագոյնն է : Բացառիկ

օրէնքներովը կ'աշխատուի կղերը լռութեան մատնելու . հոգ չէ՛, և վնաս չունի որ հակասեն այդ օրէնքները այնքան գովաբանուած ազատութեան, հաւասարութեան և նոյն իսկ իւզճի օրինաց և սկզբանց, երբ խնդիրը Աստուծոյ, Եկեղեցւոյ և եկեղեցականաց վրայ է, ամէն օրէնք և կարգ կանոն կ'անտեսուին ու կ'ոտնակոխուին լրբաբար և մարդկայնականութեամբ . . .

